

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ  
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Շահխաթունի Գևորգ Հարությունի

Կիսահաղորդչային գազազգայուն նանոկառուցվածքների հետազոտումը ռեզիստիվ  
և իմպեդանսային սպեկտրասկոպիայի եղանակներով

Ա.04.10 - «Կիսահաղորդիչների ֆիզիկա» մասնագիտությամբ տեխնիկական  
գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ-2024

THE MINISTRY OF EDUCATION, SCIENCE, CULTURE AND SPORTS OF THE RA  
YEREVAN STATE UNIVERSITY

Shahkhatuni Gevorg

**Investigation of semiconductor gas-sensitive nanostructures by the resistive and  
impedance spectroscopy methods**

Thesis for the degree of Candidate of Technical Sciences

Specialty 01.04.10 "Semiconductor Physics"

Abstract

YEREVAN-2024

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի Պետական Համալսարանի  
Ֆիզիկայի Ինստիտուտի գիտական խորհրդում:

Գիտական ղեկավար՝ տեխ. գիտ. դոկտոր, Մ. Ս. Ալեքսանյան  
Պաշտոնական ընդդիմախոսներ՝ տեխ. գիտ. թեկնածու, Ն. Վ. Մարտիրոսյան  
Ֆիզ. -մաթ. գիտ. դոկտոր, Վ. Վ Հարությունյան

Առաջատար կազմակերպություն՝ ՀՀ ԳԱԱ Ֆիզիկայի կիրառական պրոբլեմների  
ինստիտուտ

Ատենախոսության պաշտպանությունը տեղի կունենա 2024թ. մայիսի 27-ին՝ ժամը  
14:30-ին, Երևանի Պետական Համալսարանի Ֆիզիկայի 049 մասնագիտական  
խորհրդի նիստում (Երևան, հասցե՝ 0025, ք. Երևան, Ա. Մանուկյան 1)  
Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԵՊՀ գրադարանում:  
Սեղմագիրն առաքված է 2024թ.-ի ապրիլի 25-ին:

049 մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար՝  Ֆիզ. -մաթ. գիտ. թեկնածու  
Վ.Պ. Քալանթարյան

---

The thesis theme is approved at the Academic Council of the Institute of Physics at the  
Yerevan State University

Scientific adviser: Doctor of Technical Sciences M. S. Aleksanyan  
Official opponents: Candidate of Technical Science N. V. Martirosyan  
Doctor of Phys. Math. Science V. V. Harutyunyan  
The leading organization: Institute of Applied Problems of Physics State (NAS RA)

The defense of the thesis will take place at 14:30 on 27 May 2024 on the session of the  
Specialized Council 049 Physics of the Yerevan State University.

Address: 1 Alex Manoogian Street, 0025 Yerevan, Armenia.

The thesis is available in the library of the Yerevan State University.  
The abstract is distributed on 25 April 2024.

Scientific secretary of the Specialized Council  Candidate of Phys. Math. Sciences  
Associate Prof. V.P. Kalantaryan

## **ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐ**

### **Թեմայի արդիականությունը**

Հայտնի է, որ համաշխարհային տնտեսությունը գրանցում է ծավալների և զարգացման աննախադեպ աճ, որին ի պատասխան գրեթե ամենուր պահանջվում են ավելի բարձր պարամետրերով համակարգեր: Խնդիրն ավելի է բարդանում, երբ խոսքը գնում է անվտանգային համակարգերի ներդրման և դրանց կիրառման մասին: Մեզ շրջապատող և մարդկային գործունեությանը ծառայող գրեթե բոլոր միջավայրերում օգտագործվում են տարաբնույթ գազեր և նյութերի գուրորշիններ: Նմանատիպ գազերի արտահոսքերի հայտնաբերման, դրանց հոսքերի կառավարման և կոնցենտրացիաների չափման լավագույն միջոցը փոքր չափսերով և դյուրակիր սենսորային կառուցվածքների կիրառումն է: Այսպիսի սենսորների առջև դրված խնդիրները տարեցտարի բարդանում են՝ պահանջելով ավելի բարձր զգայունությամբ, ընտրողունակությամբ, արագագործությամբ և կայունությամբ օժտված համակարգեր: Այս առումով, գազային սենսորների համար նոր կոմպոզիտային նյութերի սինթեզումը և դրանց հիման վրա բարձր աշխատունակությամբ օժտված սենսորների պատրաստումը ու դրանց խորքային հետազոտումը՝ ուղղված այդ պարամետրերի լավարկմանը խիստ արդիական խնդիրներ են:

### **Աշխատանքի հիմնական նպատակները**

- Հանգամանորեն ուսումնասիրել միա- և բազմակոմպոնենտ կիսահաղորդչային միացությունների և նանոկոմպոզիտ նյութերի էլեկտրաֆիզիկական ու գազագազայինության հատկությունները և դիտարկել դրանց՝ գազային սենսորներում կիրառման հնարավորությունները:
- Տարբեր եղանակներով սինթեզել նանոկառուցվածքային բազմաբաղադրիչ գազագազային նյութեր և դրանց հիման վրա պատրաստել ռեզիստիվ գազային սենսորներ:
- Կիրառելով և՛ ռեզիստիվ, և՛ իմպեդանսային մեթոդներ՝ հանգամանորեն ուսումնասիրել պատրաստված նանոկառուցվածքային սենսորների բնութագրերը՝ դրանց լավարկման նպատակով:

### **Աշխատանքում առաջադրվել և լուծվել են հետևյալ խնդիրները**

- Տեխնոլոգիական տարատեսակ եղանակներով սինթեզվել են տարբեր բաղադրությամբ կիսահաղորդչային մետաղօքսիդային նանոկառուցվածքներ:
- Հետազոտվել են սինթեզված նյութերի կառուցվածքային և էլեկտրաֆիզիկական հատկությունները:
- Ստացված նանոկառուցվածքների հիման վրա պատրաստվել են ռեզիստիվ սենսորներ՝ օգտագործելով մշակված տեխնոլոգիական մեթոդներ:
- Պատրաստված սենսորների պարամետրերի լավարկման նպատակով դրանց բնութագրերը հետազոտվել են ոչ միայն ռեզիստիվ, այլ նաև իմպեդանսային եղանակով:
- Իմպեդանսային եղանակի կիրառումը սենսորների բնութագրերի ուսումնասիրման նպատակով թույլ է տվել ստանալ խորքային գիտելիքներ գազագազայինության մեխանիզմների և դրանց վրա ազդող հնարավոր գործոնների վերաբերյալ:

### **Գիտական նորույթը**

- Մշակված, նոր և էժան տեխնոլոգիական մեթոդներով (ռեժիմներով) հաջողվել է սինթեզել տարբեր կիսահաղորդչային նանոկոմպոզիտներ, որոնց տվյալ բաղադրությունը առաջին անգամ օգտագործվել է տվյալ գազի հայտնաբերման համար:
- Մշակվել են պատրաստված սենսորների բնութագրերի չափման նոր մեթոդներ, որոնց միջոցով առաջին անգամ առաջ են քաշվել սենսորների համարժեք էլեկտրական շղթաները և դրանց կառուցվածքի ու սենսորների պարամետրերի միջև հարաբերակցությունները:

### **Կիրառական նշանակությունը**

1. Մշակված տեխնոլոգիական ռեժիմների միջոցով աճեցված կոմպոզիտ նանոկառուցվածքները գործնականում կիրառելի են գազային սենսորներում:
2. Այստեղ օգտագործվող մետաղօքսիդային նյութերը և ածխածնային նանոխողովակներն օժտված են բավական բարձր մեխանիկական և քիմիական կայունությամբ, ինչպես նաև ունեն պարամետրերի ժամանակային կայունություն, որոնք խիստ կարևոր են սենսորներն իրական միջավայրում կիրառելու համար:
3. Պատրաստված նանոկառուցվածքային ռեզիստիվ սենսորները չափսերով փոքր են, դյուրակիր և համատեղելի ժամանակակից միկրո- և նանոէլեկտրոնային համակարգերի հետ:
4. Սենսորների բնութագրերի խորքային հետազոտումն իմպեդանսային եղանակով թույլ է տալիս էականորեն բարելավել դրանց աշխատունակության բնութագրերը:
5. Պատրաստված սենսորներն ունակ են աշխատել նաև փոփոխական ազդանշանների կիրառմամբ, որը թույլ է տալիս դրանց ինտեգրումը բարձրիաճախային տիրույթներում աշխատող ժամանակակից էլեկտրոնային համակարգերին:

### **Պաշտպանությանը ներկայացված հիմնական դրույթները**

1. Մշակված ճշգրիտ տեխնոլոգիական մեթոդների և ռեժիմների կիրառումը բերել է գազագազային կոմպոզիտային նյութերի հաջող սինթեզման:
2. Մետաղօքսիդային նանոկոմպոզիտների բաղադրությունների ճշգրիտ ընտրությունը ( $Fe_2O_3:ZnO$  (80:20 կշռ.%),  $Fe_2O_3:ZnO$  (60:40 մոլ.%),  $ZnO:La+1ատ. \%La$ ,  $ZnO+2ատ. \%La$ ,  $SnO_2+1ատ. \%Co$ , բազմապատ ածխածնային նանոխողովակներ ( $ԲԱՆԽ$ ): $SnO_2$  (5:95 կշռ.%),  $SnO_2/ԲԱՆԽ$  (75:25 կշռ.%) և  $ԲԱՆԽ/SnO_2$  (1:600)) բերել է դրանց բարձր զգայունության ( $S \sim 5-5000$ ) ջրածնի, ամոնիակի, ացետոնի, էթանոլի, հեղուկացված նավթային գազի և ջրածնի պերօքսիդի գոլորշիների ( $ՋՊԳ$ ) նկատմամբ:
3. Ջրածնի պերօքսիդի գոլորշիների նկատմամբ զգայուն  $SnO_2/ԲԱՆԽ$  կոմպոզիտ նյութի և պոլիմիդե ճկուն տակդիրի էֆեկտիվ համակցումը բերել է սենսորի գազագազայինության բնութագրերի կայունության՝ բազմակի ճկունների նկատմամբ:
4. Ուլտրամանուշակագույն (ՈւՄ) ճառագայթների կիրառումը  $Fe_2O_3:ZnO$  (80:20 կշռ. %) սենսորի ակտիվ մակերևույթին բերում է  $ՋՊԳ$ -ի նկատմամբ բարձր զգայունության ( $S \sim 12-20$ )՝ հաստատված և՛ ռեզիստիվ, և՛ իմպեդանսային սպեկտրասկոպիայի (ԻՍ) մեթոդներով:
5. ԻՍ եղանակով հետազոտվող գազագազային նյութերի համար ընտրված համարժեք էլեկտրական շղթաները մեծապես համընկնում են հայտնի փորձարարական

արդյունքների հետ, որը արդարացնում է ԻՍ եղանակի կիրառումը գազային սենսորների հետազոտությունների համար:

### **Տպագրություններ**

Ատենախոսության հիմնական արդյունքները տպագրվել են 13 գիտական հոդվածներում, ներկայացվել են 4 գիտաժողովների նյութերում և ձեռք են բերվել 3 արտոնագրեր: Տպագրված աշխատանքների ցուցակը բերված է ատենախոսության վերջում:

### **Աշխատանքի կառուցվածքը և ծավալը**


Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, 4 գլուխներից և գրականության ցանկից, որն իր մեջ ներառում է 136 հղում: Աշխատանքում առկա են 70 նկար, 3 աղյուսակ: Աշխատանքի ընդհանուր ծավալն է 125 էջ:

### **Աշխատանքի բովանդակությունը**

**Ներածություն** մեջ ներկայացված են թեմայի արդիականությունը, աշխատանքի նպատակը, ստացված արդյունքների գիտական նորոյթը, գործնական արժեքը, ինչպես նաև բերված են պաշտպանությանը ներկայացվող հիմնական դրույթները:


**Առաջին գլխում** ներկայացված են ժամանակակից կիսահաղորդչային գազային սենսորների տեսակները, դրանց կառուցվածքն ու առանձնահատկությունները: Մանրամասն ներկայացվել են սենսորներին բնութագրող կարևորագույն պարամետրերը, որոնցից են գազազգայունությունը, ընտրողունակությունը, արագագործությունը, կայունությունը և այլն: Բերված է նաև իմպեդանսային սպեկտրասկոպիկ հետազոտման մեթոդի նկարագիրը: Այստեղ ներկայացված են վերջին տարիներին տարբեր հետազոտողների կողմից առաջարկված սենսորների բնութագրերը և դրանց պատրաստման տեխնոլոգիական եղանակները:

**Երկրորդ գլխում** ներկայացված են նանոկոմպոզիտային գազազգայուն նյութերի սինթեզման և դրանց հիման վրա ռեգիստիվ սենսորների պատրաստման տեխնոլոգիական առանձնահատկությունները: Այստեղ ներկայացված են նաև ստացված թաղանթների կազմաբանական, կառուցվածքային և բյուրեղական բնութագրերը: Ներկայացված է նաև սենսորների բնութագրերի չափման ռեգիստիվ և իմպեդանսային կայանքների նկարագիրը, ինչպես նաև մեր կողմից օգտագործված սենսորային տակդիրների կառուցվածքը: Մասնավորապես՝ պինդֆազային սինթեզման եղանակով պատրաստվել են  $Fe_2O_3:ZnO$  (80:20 կշռ.%),  $Fe_2O_3:ZnO$  (60:40 մոլ.%),  $ZnO:La+1ատ. \%La$ ,  $ZnO+2ատ. \%La$  և  $SnO_2+1ատ. \%Co$  կիսահաղորդչային բազմակոմպոնենտ թիրախներ:  $Fe_2O_3:ZnO$  (80:20 կշռ.%) թիրախի կազմաբանությունը ուսումնասիրվել է տեսաձրող էլեկտրոնային մանրադիտակով (SEU) (MIRA 3 LMH-Tescan), որի պատկերներից պարզ է դարձել, որ հետազոտվող նյութի ծակոտիների միջին չափսերը 5-10 մկմ կարգի են (Նկ. 1): Թիրախը ուսումնասիրվել է նաև EDX (Energy-dispersive X-ray spectroscopy) տարրային վերլուծության միջոցով, որը հաստատել է Fe, Zn և O տարրերի առկայությունը թիրախային նյութում:




Նկ. 1  $Fe_2O_3:ZnO$  (80:20 կշն.%) թիրախի ՏԷՄ պատկերը:

$Fe_2O_3:ZnO$  նյութի բյուրեղական կառուցվածքը վերլուծվել է նաև փոխանցող էլեկտրոնային մանրադիտակի (ՓԷՄ) միջոցով (EFTEM Jeol 2200 FS, JEOL Ltd, Tokyo, Japan) և հաստատվել է մասնիկների 15-30 նմ տրամագիծը, ինչպես նաև  $ZnO$ -ի հեքսագոնալ կառուցվածքը (Նկ. 2):




Նկ. 2  $Fe_2O_3:ZnO$  նյութի ՓԷՄ պատկերը:

Պինդֆազային սինթեզման եղանակով նստեցվել է նաև  $ZnO+1ատ. \%La$  պարունակությամբ թիրախ: Այս և տարբեր թիրախների սինթեզումից հետո կատարվել է նստեցում մագնետրոնային և էլեկտրոնաճառագայթային փոշեցրման եղանակների միջոցով: Մասնավորապես՝  $Fe_2O_3:ZnO$  (80:20 կշն.%) թիրախից մագնետրոնային փոշեցրման եղանակով նստեցվել է գազազգայուն թաղանթը, որի ՏԷՄ պատկերը ներկայացված է Նկ. 3-ում:  $Zn$ -ի իրական կոնցենտրացիաները թիրախային նյութում և թաղանթում համապատասխանաբար կազմել են 21.2 և 19.4 կշն.՝ մի փոքր շեղվելով նախնական հաշվարկված արժեքից (20 կշն.%)։ Ենթադրվում է, որ նման շեղումները պայմանավորված են չափիչ սարքերի և տեխնոլոգիական գործընթացների առանձնահատկություններով (Նկ. 4):




Նկ. 3  $Fe_2O_3:ZnO$  (80:20 կշն.%) թաղանթի ՏԷՄ պատկերը:



Նկ. 4  $Fe_2O_3:ZnO$  (80:20 կշն.%) թաղանթի փարրային անալիզի (EDX) արդյունքները:


Մագնետրոնային փոշեցրման եղանակով ստացվել են նաև  $Fe_2O_3:ZnO$  (60:40 մոլ.%) և  $SnO_2+1$ ատ.%Co թաղանթները: Էլեկտրոնաճառագայթային նստեցման եղանակով ճկուն տակդիրի վրա նստեցվել է ԲԱՆԽ: $SnO_2$  (5:95 կշն.%) թաղանթ ( $SnO_2$ -ի փոշու հետ խառնված ԲԱՆԽ-ներ, Nanoshel-UK Ltd., արտաքին տրամագիծը՝ ~80-100 նմ, երկարությունը՝ ~3-8 մկմ, մաքրությունը՝ 99%), որի հաստությունը (180 նմ) չափվել է Alpha-Step D-300 (KLA Tencor) պրոֆիլոմետրի միջոցով:

Ատենախոսության շրջանակներում նանոկառուցվածքային թաղանթներ պատրաստվել են ոչ միայն ֆիզիկական նստեցման եղանակով (PVD), այլ նաև տարատեսակ քիմիական եղանակներով (CVD): Մասնավորապես՝ պատրաստվել են 75:25 կշն.%  $SnO_2$ /ԲԱՆԽ և ԲԱՆԽ/ $SnO_2$  (1:600) բաղադրությամբ թաղանթները: 75:25 կշն.%  $SnO_2$ /ԲԱՆԽ (Nanoshel-UK Ltd UK,  $SnO_2$ -ի փոշու հատիկի տրամագիծը՝ 20-40 նմ, ԲԱՆԽ-ի տրամագիծը՝ 10-30 մկմ, ԲԱՆԽ-ի երկարությունը՝ 100-900 մկմ) թաղանթը նստեցվել է 130 մկմ հաստությամբ ճկուն պոլիմիդային թիթեղի վրա՝ ցենտրիֆուգման եղանակով (Centrifug-Laurell WS-650HZB-23NPPB): Հանվել է  $SnO_2$ :ԲԱՆԽ նյութի ռենտգենյան պատկերը՝ Empyrean ( $\lambda$  CuK $\alpha$ ), Malvern Panalytical կայանքի միջոցով (Նկ. 5), որտեղ առկա են Sn-ի և C-ի պիկերը:



Նկ. 5 SnO<sub>2</sub>:PULSU (75:25 կշռ.%) թաղանթի ռենտգենյան պատկերը:

PULSU/SnO<sub>2</sub> (1:600) նանոկոմպոզիտային բաղադրությունը ստացվել է հիդրոջերմային սինթեզման եղանակով: Որպես սենսորային տակդիր օգտագործվել են բազմասենսորային հարթակներ (TESLA BLATNA, Չեխիա), որոնց վրա նախօրոք պատրաստվել են պլատինե սանրածն էլեկտրոդներ, ջեռուցիչ և ջերմաստիճանային սենսոր (Pt 1000): Հանվել է մաքուր PULSU-ների S<sub>EF</sub> պատկերը (Նկ. 6), որտեղ ակնհայտ է նանոխողովակների առկայությունը:




Նկ. 6 PULSU-ների S<sub>EF</sub> պատկերը:

**Երրորդ գլխում** ռեզիստիվ եղանակով մանրամասն ուսումնասիրվել են պատրաստված սենսորների պարամետրերը ջրածնի, ամոնիակի, ազոտի, էթանոլի, հեղուկացված նավթային գազի և ջրածնի պերօքսիդի գոլորշիների նկատմամբ: Մասնավորապես՝ Fe<sub>2</sub>O<sub>3</sub>:ZnO (60:40 մոլ.%) սենսորը 250°C աշխատանքային ջերմաստիճանում բարձր զգայունություն է ցուցաբերել ամոնիակի ցածր կոնցենտրացիաների նկատմամբ (27 ppm՝ S=2, 14 ppm՝ S=1.5): Fe<sub>2</sub>O<sub>3</sub>:ZnO սենսորի դիմադրության փոփոխությունը չափվել է ամոնիակի գոլորշու տարբեր կոնցենտրացիաների նկատմամբ՝ 250°C աշխատանքային ջերմաստիճանում (Նկ. 7): Սենսորը ցույց է տվել գրեթե ամբողջությամբ վերականգնելի արձագանքման-վերականգնման բնութագրեր: Արձագանքման և վերականգնման ժամանակները չեն գերազանցել մի քանի տասնյակ վայրկյանները: Սենսորը գրեթե ամբողջությամբ վերականգնվում է նոյնիսկ ամոնիակի կոնցենտրացիաների բավական բարձր արժեքների դեպքում (~1096 ppm): Արձագանքման և վերականգնման նմանատիպ




ընութագրերը պայմանավորված են 250°C աշխատանքային ջերմաստիճանով, որի դեպքում ֆիզիկաքիմիական պրոցեսների ակտիվացիայի համար ստացվում են ադսորբցիայի և դեսորբցիայի բավարար էներգիաներ:



Սկ. 7  $Fe_2O_3:ZnO$  սենսորի դիմադրության փոփոխությունն ամոնիակի գոլորշիների փարբեր կոնցենտրացիաների նկատմամբ 250°C աշխատանքային ջերմաստիճանում:


Ուսումնասիրվել է  $Fe_2O_3/SnO_2$  (1:600) նանոկոմպոզիտային սենսորի զգայունությունը ացետոնի գոլորշիների նկատմամբ: Առավելագույն արձագանքը դիտվել է 250°C աշխատանքային ջերմաստիճանում, որի դեպքում ացետոնի գոլորշու 20 ppm-ի կոնցենտրացիայի դեպքում սենսորի դիմադրությունը փոխվել է 7.4 անգամ:  $Fe_2O_3/SnO_2$  սենսորի արձագանքը չափվել է ացետոնի գոլորշու տարբեր կոնցենտրացիաների նկատմամբ 250°C աշխատանքային ջերմաստիճանում (Սկ. 8a):  $Fe_2O_3/SnO_2$  սենսորի դիմադրությունը նույնիսկ 400 ppb կոնցենտրացիայի նկատմամբ փոխվել է 1.2 անգամ: Հավելենք, որ սենսորի արձագանքի կախվածությունը ացետոնի գոլորշու կոնցենտրացիայից գծային է (Սկ. 8b), ինչը թույլ է տալիս զգայունության արժեքների մոտարկում ներկայացված կոնցենտրացիաների հարակից տիրույթներում:



Սկ. 8  $Fe_2O_3/SnO_2$  սենսորի արձագանքը ացետոնի գոլորշու փարբեր կոնցենտրացիաների դեպքում (400 ppb- 20 ppm) (a) և սենսորի արձագանքի կախվածությունը ացետոնի գոլորշու կոնցենտրացիայից (b):


Էթանոլի գոլորշիների հայտնաբերման համար պատրաստվել է  $ZnO+1\text{ատ.}\%La$  կառուցվածքով սենսոր: 250°C աշխատանքային ջերմաստիճանում հետազոտվել է  $ZnO<La>$  սենսորի արձագանքը էթանոլի գոլորշիների տարբեր կոնցենտրացիաների

համար (Նկ. 9): Սենսորը հայտնաբերել է էթանոլի գոլորշիներ սկսած 0.7 ppm կոնցենտրացիայից, իսկ ավելի բարձր կոնցենտրացիաների դեպքում (34 ppm) սենսորի արձագանքը հասել է ավելի քան 19-ի: ZnO+1ատ.%La սենսորի արձագանքը կախված կոնցենտրացիայից եղել է գրեթե գծային և ցուցաբերել է կրկնելի վարքագիծ՝ 6.7 ppm էթանոլի կոնցենտրացիայի յոթ ցիկլերի համար:



Նկ. 9 ZnO<La> սենսորի արձագանքը փարբեր ջերմաստիճաններում՝ 675 ppm էթանոլի գոլորշիների նկատմամբ:

Պատրաստվել են նաև տարբեր կառուցվածքներով ջրածնի սենսորներ: Մասնավորապես՝  $\text{FALiSnO}_2$  (5:95 կշռ.%) կառուցվածքով ճկուն սենսորը, որը զգայունության առավել մեծ արժեքներ, ինչպես նաև արձագանքման և վերականգման համեմատաբար փոքր ժամանակներ է ցուցաբերել սկսած 100°C ջերմաստիճանից: Սենսորի զգայունության բնութագրերը բավականին մոտ են եղել 100°C և 150°C ջերմաստիճաններում, սակայն 150°C ջերմաստիճանի դեպքում սենսորի արձագանքը մոտավորապես 1.6 անգամ ավելի մեծ է եղել, քան 100°C-ում: Քանի որ այս երկու ջերմաստիճաններում արձագանքման արժեքները էականորեն տարբեր չեն, և ավելի բարձր աշխատանքային ջերմաստիճանում էներգիայի սպառումը բավական մեծ է (535 Վտ՝ 100°C և 980 Վտ՝ 150°C-ում), նախընտրելի է եղել դիտարկել 100°C-ը որպես աշխատանքային ջերմաստիճան: Արդյունքները ցույց են տվել, որ սենսորը զգալի արձագանք է ցուցաբերել (2.5 անգամ) անգամ 25 ppm  $\text{H}_2$ -ի նկատմամբ (Նկ. 10):



Նկ. 10  $\text{FALiSnO}_2$  (5:95 կշռ. %) ճկուն սենսորի արձագանքը ջրածնի փարբեր կոնցենտրացիաների նկատմամբ՝ 100°C աշխատանքային ջերմաստիճանում:


Հատկանշական է, որ ինչպես մաքուր  $\text{SnO}_2$ -ի, այնպես էլ մաքուր  $\text{FALiSnO}_2$ -ների վրա հիմնված սենսորներն ունեն չափազանց թույլ զգայունություն  $\text{H}_2$ -ի նկատմամբ:

Նախնական ուսումնասիրություններ են իրականացվել սենսորի ճկման հատկությունները ուսումնասիրելու համար: Սենսորի զգայունությունը գրեթե կախված չի եղել ճկումների քանակից և ճկման աստիճանից:

Պատրաստվել է նաև  $\text{Fe}_2\text{O}_3:\text{ZnO}$  (60:40 կշռ.%) կառուցվածքով ջրածին հայտնաբերող սենսոր: Սենսորը ջրածնի նկատմամբ զգայունություն է ցուցաբերել արդեն  $50^\circ\text{C}$  ջերմաստիճանում ունենալով 1000-ից բարձր արձագանքման արժեք: Ամենաբարձր զգայունությունը դիտվել է  $100^\circ\text{C}$  աշխատանքային ջերմաստիճանում, որի դեպքում գազի ազդեցությունը հանգեցրել է գազազգայուն թաղանթի դիմադրության նվազման ավելի քան 5000 անգամ:  $200^\circ\text{C}$  աշխատանքային ջերմաստիճանում հետազոտվել է  $\text{Fe}_2\text{O}_3:\text{ZnO}$  սենսորի զգայունությունը ջրածնի 75-2000 ppm կոնցենտրացիաների նկատմամբ (75 ppm ջրածնի կոնցենտրացիայի դեպքում սենսորի դիմադրությունը փոխվել է ավելի քան 11 անգամ):

Ջրածնի պերօքսիդի գոլորշիներ հայտնաբերելու նպատակով պատրաստվել են մի շարք սենսորներ: Մասնավորապես՝  $\text{Fe}_2\text{O}_3:\text{ZnO}$  (80:20 կշռ.%) կառուցվածքով գազազգայուն թաղանթը ցուցաբերել է զգայունություն անգամ ջրածնի չափազանց ցածր կոնցենտրացիաների նկատմամբ: Հետազոտություններ են կատարվել  $25-250^\circ\text{C}$  ջերմաստիճաններում պերօքսիդի գոլորշիների 3-225 ppm կոնցենտրացիաների դեպքում: Դիտվել է սենսորի չափազանց բարձր զգայունություն նոյնիսկ առանց ՈւՄ ճառագայթների ազդեցության: Արձագանքի ջերմաստիճանային կախվածության կորում առավելագույն զգայունությունը դիտվել է  $150^\circ\text{C}$ -ում, որի դեպքում արձագանքման արժեքը գերազանցել է 2600-ը: Սենսորը բավարար զգայունություն է ունեցել նոյնիսկ սենյակային ջերմաստիճանում ( $S=23$ ), ինչը ապացուցում է քիմսորբցիոն երևույթների առկայությանը առանց լրացուցիչ ջերմային ազդեցության: Չնայած սենյակային ջերմաստիճանում սենսորի արձագանքի առկայությանը, այստեղ արձագանքման և վերականգնման ժամանակները գերազանցել են տասնյակ րոպաները՝ ցույց տալով այս ջերմաստիճանում սենսորի բավականին անարդյունավետ աշխատանքը, մինչդեռ ավելի բարձր ջերմաստիճաններում ( $>200^\circ\text{C}$ ) դրանք վայրկյանների կարգի են եղել: Այս վարքագիծը կանխատեսելի է, քանի որ քիմիական ռեակցիաների և գազի դիֆուզիայի տեմպերը հակված են աճել ջերմաստիճանի բարձրացմանը զուգընթաց: Սենսորի արձագանքման/վերականգնման ժամանակները և աշխատանքային ջերմաստիճանը նվազեցնելու ամենատարածված ու արդյունավետ միջոցներից է հանդիսանում նրա ակտիվ մակերևույթը ՈւՄ ճառագայթների ազդեցության ենթարկելը: ՈւՄ ազդեցությամբ  $\text{Fe}_2\text{O}_3:\text{ZnO}$  սենսորի արձագանքները գրանցվել են տարբեր ջերմաստիճաններում ( $25-250^\circ\text{C}$ )՝ ՋՊԳ-ի 1.5 ppm կոնցենտրացիայի համար: Սենյակային ջերմաստիճանից սկսած սենսորի արձագանքը նվազել է, իսկ  $200^\circ\text{C}$ -ից՝ դարձել է որոշակիորեն կայուն, ինչը միանշանակ թույլ է տվել որպես աշխատանքային ջերմաստիճան ընտրել հենց սենյակայինը: Ենթադրվում է, որ ՈւՄ ճառագայթների առկայությունը բարենպաստ պայմաններ է ստեղծում գազի ադսորբցիայի և ցանցի հետ հետագա փոխազդեցության համար, իսկ ՈւՄ ճառագայթների կիրառումը տաքացման հետ միասին հանգեցնում է ՋՊԳ-ի դետորբցիայի արագության աճին՝ միևնույն ժամանակ առաջացնելով քիմիական ռեակցիաների տեմպի զգալի աճ: Ավելին, առանց լրացուցիչ տաքացման, թաղանթի մակերևույթին ՈւՄ ճառագայթների առկայությունը բավարար է թե՛  $\text{Fe}_2\text{O}_3$ , և թե՛  $\text{ZnO}$

նյութերի հաղորդականության գոտիներում ազատ էլեկտրոնների առաջացման համար, ինչը հանգեցնում է նանոհատիկների միջև Շոտկիի արգելքների նվազման: Սենսորը ցուցաբերել է գրեթե նույն արձագանքը սենյակային ջերմաստիճանում ՈւՄ ճառագայթների ազդեցությամբ և առանց դրանց, համապատասխանաբար 3 և 225 ppm ՋՊԳ-ի կոնցենտրացիաների համար (Նկ. 11): ՈւՄ ճառագայթի առկայությունը սենսորի մակերևույթին ոչ միայն հանգեցրել է սենսորի արձագանքի զգալի բարելավմանը, այլև ավելացրել է արձագանքման և վերականգնման արագությունները:




Նկ. 11  $Fe_2O_3:ZnO$  (80:20 կշ. %) սենսորի արձագանքման կորերը ՋՊԳ-ի 3 և 225 ppm կոնցենտրացիաների համար համապատասխանաբար ՈւՄ ճառագայթների ազդեցությամբ և առանց դրանց:

Ենթադրվում է, որ ՈւՄ ճառագայթման արդյունքում առաջացած էլեկտրոն-խոռոչ զույգերը ինտենսիվորեն մասնակցում են կիսահաղորդչի մակերևույթին տեղի ունեցող քիմսորբցիոն գործընթացներին և զուգահեռաբար դրանք խթանում են նաև քիմիական ռեակցիաներում էլեկտրոնների փոխանակման արագությանը [1]:


Ճկուն պոլիմիդե տակդիրի վրա պատրաստվել է նաև ՋՊԳ հայտնաբերող  $SnO_2$ /ԲԱՆՆ (75:25 կշ.%) կառուցվածքով սենսոր: Սենսորի արձագանքը ՋՊԳ-ի 1.5 ppm կոնցենտրացիայի նկատմամբ չափվել է 25–150°C ջերմաստիճանային միջակայքում՝ ՈւՄ ճառագայթների ազդեցությամբ և առանց դրանց: Առավելագույն արձագանքները եղել են 428 և 410, որոնք դիտվել են համապատասխանաբար 75 և 125°C ջերմաստիճաններում: Հաշվի առնելով, որ սենսորի արձագանքի արժեքը սենյակային ջերմաստիճանում հասել է 44-ի, մինչ ճկուն տակդիրի դեպքում ցանկալի չէ այն տաքացնել, որպես սենսորի աշխատանքային ջերմաստիճան ընտրվել է սենյակայինը՝ ՈւՄ ազդեցությամբ: Ինչպես և նախորդ ՋՊԳ-ի սենսորի դեպքում  $SnO_2$ :ԲԱՆՆ կառուցվածքը ավելի ցածր կոնցենտրացիաների համար (1.5–20 ppm) ցուցաբերել է արձագանքի գծայնություն: Պատրաստվել են նաև մաքուր անագի օքսիդի և մաքուր ԲԱՆՆ-ների վրա հիմնված սենսորներ՝ համեմատելու գազազգայնության բնութագրերը  $SnO_2$ :ԲԱՆՆ նանոկոմպոզիտային նյութի հետ: Երկու սենսորներն էլ չափազանց ցածր զգայունություն են ցուցաբերել ՋՊԳ-ի նկատմամբ, ինչը արդարացնում է ԲԱՆՆ-ների ներմուծումը  $SnO_2$ -ի մեջ: Ածխածնի նանոխողովակները մեծացնում են գազազգայուն նյութի էֆեկտիվ մակերեսը (որը բերում է զգայունության աճին), օժտում են նյութին բարձր ճկունությամբ, իսկ դրանցում լիցքակիրների բարձր շարժունակության շնորհիվ մեծանում է նաև սենսորի արագագործությունը [2]: Որպես սենսորի արագագործության արտացոլում, սենյակային ջերմաստիճանում ստացվել է  $SnO_2$ :ԲԱՆՆ սենսորի դինամիկ

արձագանքման/վերականգնման կորերը՝ ՋՊԳ-ի 3 ppm կոնցենտրացիայի համար: Սենսորի արձագանքման և վերականգնման ժամանակները կազմել են համապատասխանաբար 39 և 140 վ (Նկ. 12):



Նկ. 12 SnO<sub>2</sub>:PU (75:25 կշռ. %) սենսորի դիմադրության փոփոխությունը՝ ՋՊԳ-ի 3 ppm կոնցենտրացիայի դեպքում:


Զգայուն թաղանթի մեխանիկական և քիմիական կայունությունը ու դրանցից կախված սենսորի այլ պարամետրերի կայունությունը ստուգվել է ճկուն տակդիրը բազմակի անգամ ենթարկելով ճկումների՝ 90 աստիճանով: Ինչպես ցույց է տրված Նկ. 13-ում, իրականացվել են ճկման 13 փորձարկում՝ ավելացնելով սենսորի ճկումների թիվը՝ 0-ից մինչև 1200: Այսպիսով փորձնականորեն հաստատվել է սենսորի արձագանքի բարձր կայունությունը ճկման նկատմամբ:



Նկ. 13 SnO<sub>2</sub>:PU (75:25 կշռ.%) ճկուն սենսորի արձագանքի սենսորի բազմակի ճկումների դեպքում:

**Չորրորդ գլխում** ներկայացված են սենսորների պարամետրերի ԻՍ եղանակով հետազոտման արդյունքները: ԻՍ եղանակով բացահայտվել են սենսորների զգայունության որոշակի մեխանիզմներ և դրանց հնարավոր ազդեցությունը գազազգայունության պարամետրերի վրա: Հաստատուն հոսանքով՝ միայն ռեզիստիվ եղանակով չափումները տեղեկատվություն են տալիս սենսորի զգայունության, ընտրողականության, արձագանքման և վերականգնման ժամանակների մասին, մինչ փոփոխական հոսանքով չափումները թույլ են տալիս պատկերացում կազմել ծավալային և մակերևութային վիճակների, հատիկների սահմանների, ձևավորված Շոտկի արգելքների մասին: Այս եղանակը թույլ է տալիս գնահատել սենսորի երկրաչափական չափերի և ձևի ազդեցությունը գազազգայունության պարամետրերի վրա [3]: ԻՍ


եղանակով հետազոտվել են մի շարք սենսորներ, որոնցից է  $ZnO+1ատ.\%La$  կառուցվածքով ՋՊԳ-ի սենսորը: Չափումները կատարվել են ինչպես օդում, այնպես էլ 100 ppm ՋՊԳ-ի առկայության պայմաններում՝  $240^{\circ}C$  ջերմաստիճանում (այս ջերմաստիճանը ընտրվել է նախօրոք կատարված ՎԱ բնութագրերի հետազոտության արդյունքում), որոնք ներկայացված են Նկ. 14a-ում՝ Նայքվիստի կորերի տեսքով:



Նկ. 14  $ZnO+1ատ.\%La$  սենսորի Նայքվիստի դիագրամը օդում (1) և ՋՊԳ-ի ազդեցությամբ (2) (a) ու սենսորի համար ընտրված համարժեք էլեկտրական շղթան (b):

Ստացված Նայքվիստի կորերի ձևը հուշում է, որ ուսումնասիրվող կառուցվածքը կարող է մոդելավորվել զուգահեռ  $RC$  շղթաներ պարունակող համարժեք շղթայի միջոցով (Նկ. 14b), որոնք բնութագրում են լիցքերի տեղափոխման երկու պրոցեսներ՝ հատիկների ծավալում և միջհատիկային սահմաններում:

Իմպեդանսային սպեկտրոսկոպիայի եղանակով ուսումնասիրելիս սենսորի զգայունությունը սահմանվել է որպես ՋՊԳ-ի ազդեցությամբ և օդում ստացված կոմպլեքս դիմադրությունների կեղծ բաղադրիչների արժեքների հարաբերություն: Արդյունքները ցույց են տվել, որ այս կերպ որոշված զգայունությունը կախված է հաճախությունից (Նկ. 15):



Նկ. 15  $ZnO+1ատ.\%La$  սենսորի զգայունության կախվածությունը հաճախությունից՝ որոշված իմպեդանսային սպեկտրոսկոպիայի մեթոդով:


Ինչպես երևում է Նկ. 15-ից ցածր հաճախություններում զգայունությունը ՋՊԳ-ի նկատմամբ զգալիորեն ավելի բարձր է, քան բարձր հաճախությունների դեպքում:

Հետևաբար, ենթադրվում է, որ գազազգայունության մեջ հիմնական ներդրումը տալիս են մակերևութային երևույթներով պայմանավորված պրոցեսները:

ԻՍ եղանակով հետազոտվել է նաև ZnO+2ատ.%La սենտորի գազազգայունության հատկությունները՝  $1-10^6$  Հց հաճախության միջակայքում: Իմպեդանսի իրական և կեղծ մասերի հաճախային կախվածությունները թույլ են տվել ենթադրել, որ սենտորի կառուցվածքը կարելի է նկարագրել Նկ. 16a-ում ներկայացված համարժեք էլեկտրական շղթայի տեսքով, որոնց համար իմպեդանսի իրական և կեղծ բաղադրիչները հաշվարկվում են հետևյալ բանաձևերով՝

$$Z'(\omega) = R_0 + \frac{R_p}{1 + \omega^2 R_p^2 C_p^2}; \quad (1)$$


$$Z''(\omega) = \frac{\omega C_p R_p^2}{1 + \omega^2 R_p^2 C_p^2}; \quad (2)$$



Նկ. 16 ZnO+2ատ.% La սենտորային կառուցվածքի համար առաջարկվող համարժեք էլեկտրական շղթան (a) և 200°C ջերմաստիճանում փորձարարական (կետեր) և տեսականորեն հաշվարկված (հոծ գծեր) հաճախային կախվածությունները՝ իմպեդանսի իրական և կեղծ մասերի համար (b):


Նկ. 16b-ում ներկայացված փորձնական և տեսական մեթոդներով հաշվարկված տվյալները բավական մոտ են (վերադրում), ինչը ապացուցում է ZnO+2ատ.%La սենտորային կառուցվածքի համար ընտրված համարժեք էլեկտրական շղթայի ճշմարտացիությունը՝ տեղի ունեցող պրոցեսները նկարագրելու համար:

Ուսումնասիրվել է նաև ՋՊԳ-ի տարբեր կոնցենտրացիաների (17.5-350 ppm) ազդեցությունը ZnO+2ատ.%La սենտորի իմպեդանսային բնութագրերի վրա, որոնք ներկայացված են Նկ. 17-ում Նայքվիստի կորերի տեսքով: Ինչպես երևում է, թիրախային գազի կոնցենտրացիայի ավելացումը հանգեցնում է Նայքվիստի կիսաշրջանի շառավղի մեծացմանը, ինչը նշանակում է  $R_p$ -ի արժեքի մեծացում, իսկ իմպեդանսի կեղծ մասի առավելագույն պիկին համապատասխանող հաճախությունը շեղվում է դեպի ավելի ցածր հաճախությունների տիրույթ: Օգտագործելով համարժեք էլեկտրական շղթայի պարամետրերի համար ստացված արժեքները, կառուցվել են մոտարկող կորեր: Փորձնական և մոտարկող կորերը եղել են բավական վերադրելի:



Նկ. 17 ZnO+2ադ. % La թաղանթի Նայքվիստի կորերը, ՋՊԳ-ի փարբեր կոնցենտրացիաների դեպքում՝ 175°C աշխատանքային ջերմաստիճանում: Կետերը ներկայացնում են փորձարարական տվյալները, հոծ գծերը՝ տեսական:

ԻՍ եղանակով հետազոտվել է ԲԱՆԽ/SnO<sub>2</sub> սենսորի զգայունությունն ացետոնի գոլորշու տարբեր կոնցենտրացիաների դեպքում (4, 10 և 20 ppm)՝ 250°C աշխատանքային ջերմաստիճանում (Նկ. 18a) և առաջարկվել է համարժեք էլեկտրական շղթա (Նկ. 18b):




Նկ. 18 ԲԱՆԽ/SnO<sub>2</sub> սենսորի Նայքվիստի կորերը (օդ (1), 4 ppm (2), 10 ppm (3), 20 ppm (4)) 250°C աշխատանքային ջերմաստիճանում (a) և առաջարկվող համարժեք էլեկտրական շղթան (b):

ZMAN 2.3 ծրագրային փաթեթի միջոցով որոշվել են առաջարկվող համարժեք էլեկտրական շղթայի տարրերի պարամետրերը և կառուցվել են մոտարկող կորերը: Նկատվել է բավական բարձր վերադրելիություն փորձնական և մոտարկող կորերի կախվածությունների միջև:

Պատրաստվել է նաև Fe<sub>2</sub>O<sub>3</sub>:ZnO (80:20 կշռ.%) սենսորը, որի բնութագրերն ուսումնասիրվել են ԻՍ միջոցով՝ 1-10<sup>6</sup> Հց հաճախության միջակայքում և 300 մՎ ամպլիտուդով սինուսոիդալ ազդանշանի դեպքում՝ 1 վ շեղման լարման առկայությամբ: Իմպեդանսի չափումները կատարվել են օդում և 100 ppm ՋՊԳ-ի առկայության պայմաններում՝ սենյակային ջերմաստիճանից մինչև 200°C աշխատանքային ջերմաստիճան: Ստացված բնութագրերի արդյունքները (Նկ. 19a)՝ մասնավորապես կեղծ բաղադրիչի հաճախային կախվածության մեկ պիկի առկայությունը թույլ է տվել



ենթադրել, որ ուսումնասիրվող կառուցվածքը կարելի է նկարագրել Նկ. 19b-ում ներկայացված համարժեք էլեկտրական շղթայով:




